# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# ՈՐՈՇՈՒՄ N 42

09 հոկտեմբերի 2013

ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
09.10.2013Թ. ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Վայք համայնքի ավագանու 09.10.2013թ-ի թիվ 7 նիստի օրակարգը.

1. Համայնքի սեփականություն հանդիսացող Ազատության 2/3 հասցեում գտնվող 263.8 քմ մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը աճուրդով օտարելու և մեկնարկային գինը հաստատելու մասին:
2.Վայքի քաղաքային համայնքի 2013թ.-ի բյուջեի երրորդ եռամսյակի մասին հաղորդում ներկայացնելու մասին:
3. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Շահումյան 6/2 հասցեում գտնվող քաղ. Սլավիկ Մաթևոսյանի կողմից ինքնակամ կառուցված առևտրաստահը օտարելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին:
4. Համայնքի 2013թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
5.Համայնքի ավագանու 30/07/2013թ. թիվ 41 որոշմամբ հաստատված թիվ 6 հավելվածը ուժը կորցրած ճանաչելու և նոր հաստիքացուցակ հաստատելու մասին;

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ

2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՅ

3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ

4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

6. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

7. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

8. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

9. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 43

09 հոկտեմբերի 2013

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 2/3 ՀԱՄՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 263.8 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ, ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, ՀՀ Կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ/ ենթակետին և 22-րդ կետին համապատասխան

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1. Տալ համաձայնություն, ըստ քաղաքի գլխավոր հատակագծի, Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Ազատության 2/3 հասցեում գտնվող 263.8 քմ մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը աճուրդով օտարելու վերաբերյալ քաղաքապետի առաջարկությանը:
2. Հաստատել նշված հողատարածքի մեկնարկային գինը 214000 դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ

5. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

6. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

7. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

8. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

9. [illegible] Արշակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 47

---

09 հոկտեմբերի 2013

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30/07/2013թ. ԹԻՎ 41 ՈՐՈՇՄԱՄԲ (ՆԻՍՏ N 6)ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՎ 6 ՀԱՎԵԼՎԱԾԸ՝ <<ՎԱՅՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-Ի 2013Թ. ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

Ղեկավարվելով ՀՀ <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 72-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 30/07/2013թ թիվ 41 որոշմամբ/նիստ N 6/ հաստատված թիվ 6 հավելվածը՝ <<Վայքի մանկական արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի 2013թ. հաստիքացուցակը հաստատելու մասին:
2. Հաստատել 2013-2014թթ ուսումնական տարվա համար <<Վայքի մանկական արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, աշխատակազմի կառուցվածքը, հաստիքացուցակը և նոր պաշտոնային դրույքաչափերը ըստ կից հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԷԴԳԱՐ ԼԵՎՈՆՅԱՆ

հավելված 1
համայնքի ավագանու
09.10.2013թ. թիվ 47 որոշման

# «ՎԱՅՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ 2013-2014ԹԹ. ՈՒՍ. ՏԱՐԻ

| Հ/Հ | ՊԱՇՏՈՆԸ | Դրույքաչափ /դրամ/ ժամի արժեք | Դրույք | Ժամ | Աշխատավարձ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 62100 | 1 | | 62100 |
| 2 | Դաշնամուր լարող | 59600 | 0.5 | | 29800 |
| 3 | Հաշվապահ | 59600 | 1 | | 59600 |
| 4 | Տեխ. աշխատող | 59600 | 0.75 | | 44700 |
| 5 | Դասատու | | | 8 | 20000 |
| 6 | Դասատու | | | 26 | 65000 |
| 7 | Դասատու | | | 26 | 65000 |
| 8 | Դասատու | | | 18 | 45000 |
| 9 | Դասատու | | | 23 | 57500 |
| 10 | Դասատու | | | 28 | 70000 |
| 11 | Դասատու | | | 26 | 65000 |
| 12 | Դասատու | | | 20 | 50000 |
| 13 | Դասատու | | | 12 | 30000 |
| 14 | Դասատու | | | 32 | 80000 |
| 15 | Դասատու | | | 26 | 65000 |
| 16 | Դասատու | | | 20 | 50000 |
| 17 | Դասատու | | | 22 | 55000 |
| 18 | Դասատու | | | 21 | 52500 |
| 19 | Դասատու | | | 26 | 65000 |
| 20 | Դասատու | | | 0 | |
| 21 | Դասատու | | | 0 | |

## ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ

| Հ/Հ | ՊԱՇՏՈՆԸ | Մասնագիտություն | Ժամի արժեք /դրամ/ | Ժամ | Աշխատավարձ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Դասատու | Շվի | | 22 | 52783 |
| 2 | Դասատու | Քանոն | | 14 | 38473 |
| 3 | Դասատու | Տեսաքան | | 4 | 9127 |
| 4 | Դասատու | Դաշն. կոնցմեն. | | 14 | 31200 |
| 5 | Դասատու | դաշնամուր | | 5 | 23000 |
| 6 | Դասատու | Տեսաքան | | 10 | 12700 |

Տնօրեն Գ. Հարությունյան

Հաշվապահ Հ. Բադալյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 44

---

09 հոկտեմբերի 2013

**ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1. Վայքի քաղաքային համայնքի 2013 թվականի երրորդ եռամսյակի կատարման մասին համայնքի ղեկավարի հաղորդումն ընդունել ի գիտություն՝ ըստ կից հավելվածների:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված թիվ 1
համայնքի ավագանու 09.10.2013թ.
թիվ 44 որոշման

Վայոց Ձորի մարզ, Վայքի քաղաքապետարան
ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ
30.09.2013թ

| N | | Եկամուտների անվանումը | Տարեկան բյուջե | Հաշվետու ժամանակաշրջան 3-րդ եռամսյակ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Խումբ | Ենթախ | | պլան | պլան | Փաստ | Կատար | կատարմ.% |
| | | | հազ.դրամ | | | ման % | տար.պլանի նկ. |
| I | | Վարչական բյուջե ընդամենը | **112730,0** | **120893,3** | **85615,0** | | 75,9 |
| 1 | | **Ընդամենը հարկային եկամուտներ** | **15800,0** | **15800,0** | **10422,5** | | 66,0 |
| | 1,1 | Գույքահարկ | 15000,0 | 15000,0 | 9776,8 | | 65,2 |
| | 1,2 | Հողի հարկ | 800,0 | 800,0 | 645,7 | | 80,7 |
| | 1,3 | Եկամտահարկից մասհանումներ | | | | | |
| | 1,4 | Շահութահարկից մասհանումներ | | | | | |
| | 1,5 | Բնապահպանական վճարներից մասհանումներ | | | | | |
| | 1,6 | Հողի հարկի և գույքահարկի տույժ և տուգանք | | | | | |
| 2 | | Ընդամենը տեղական տուրքեր (թույլտվության համար) | 3000,0 | 3292,0 | 2435,7 | | 81,2 |
| | 2,1 | Նոր կառուցվող օբյեկտների շինարարություն | 200,0 | 200,0 | 126,0 | | 63,0 |
| | 2,2 | Օբյեկտները վերակառուցելու, տեսքը փոփ. աշխատանքներ | | | | | |
| | 2,3 | Օբյեկտները քանդելու աշխատանքներ | | | | | |
| | 2,4 | Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառ | 1380,0 | 1380,0 | 1175,0 | | 85,1 |
| | ա | հիմնական շինությունների ներսում | | | | | |
| | բ | ոչ հիմնական շինությունների ներսում | | | | | |
| | 2,5 | Բացօթյա վաճառք կազմակերպելու | 900,0 | 1160,0 | 610,7 | | 67,9 |
| | ա | Գազ և վառելիքաքսայուղային նյութեր | | | | | |
| | բ | գյուղմթերքներ, յուրաքանչյուր օրվա համար | | | | | 0,0 |
| | գ | այլ ապրանքներ (այդ թվում` ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանք) | | | | | |
| | 2,6 | ժամը 24.00 ից հետո աշխատելու | | | | | |
| | ա | Խաղատներ | | | | | |
| | բ | շահումներով խաղերի կազմակերպման օբյեկտներ | | | | | |
| | գ | բաղնիքներ (սաունաներ) | | | | | |
| | դ | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներ | | | | | |
| | 2,7 | Արտաքին գովազդ տեղադրելու | 450,0 | 450,0 | 444,0 | | 98,7 |
| | ա | ծխախոտի արտադրանք գովազդող | | | | | |
| | բ | այլ արտաքին գովազդ | | | | | |
| | 2,8 | Օրենքով սահմանված այլ տեղական տուրքեր | 70,0 | 102,0 | 80,0 | | 114,3 |
| 3 | | **ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական տուրք** | **1950,0** | **1950,0** | **829,5** | | 42,5 |
| 4 | | **Ոչ հարկային եկամուտներ** | **12884,9** | **13153,7** | **8619,7** | | 66,9 |
| | 4,1 | Համայնքի սեփ.համարվող հողերի վարձակալության վարձա | 1150,0 | 1150,0 | 881,1 | | 76,6 |
| | 4,2 | Գյուղատնտեսական հողերի վարձակալության վարձավ. | | | | | |
| | 4,3 | Տեղական ինքնակառավարման մարմինների գույքի վարձակալութ. | 930,6 | 930,6 | 716,8 | | 77,0 |
| | 4,4 | Վարչական իրավախախտումների պատժամիջոցներից | | | | | |
| | 4,5 | Տեղական վճարներ | 1450,0 | 1450,0 | 1312,0 | | 90,5 |
| | 4,6 | Պետական բյուջեից պատվիրակված լիազորությունների համար հատկացումներ | 2654,3 | 2654,3 | 1858,1 | | 70,0 |
| | 4,7 | Այլ ոչ հարկային եկամուտներ | 6700,0 | 6968,8 | 3851,7 | | 57,5 |
| 5 | | **Պաշտոնական տրանսֆերտներ ՝ հատկացումներ** | **79095,1** | **84949,2** | **63307,6** | | 80,0 |
| | 5,1 | Պետական բյուջեից դոտացիա | 74795,1 | 74795,1 | 56117,6 | | 75,0 |
| | 5 | ՀՀ պետ բյուջեից ընթացիկ ծախսերի ֆին. նպատակով հատկացումներ՝ սուբվենցիա | 4300,0 | 10154,1 | 7190,0 | | 100,0 |
| | 5,2 | Այլ աղբյուրներից տրանսֆերտներ | | | | | |
| | | Տարեսկզբի ազատ մնացորդ | | | | | |
| 2 | | **Ֆոնդային բյուջե** | **12405,3** | **1748,4** | **3169,2** | | 25,5 |
| | 1 | Հողի օտարումից եկամուտներ | 8000,0 | 961,0 | 450,5 | | 5,6 |
| | 1,1 | Համայնքի սեփականությունը համարվող գույքի օտարումից | 2000,0 | 787,4 | 313,4 | | 15,7 |
| | 1 | ՀՀ պետ բյուջեից կապիտալ ծախսերի ֆին. նպատակով հատկացումներ՝ սուբվենցիա | | | | | |
| | 1,2 | Վարչական բյուջեից (պահուստային ֆոնդից ) կատարվող հատկացումներ | | | | | |
| | | Տարեսկզբի ազատ մնացորդ /ֆոնդային բյուջե/ | 2405,3 | | 2405,3 | | 100,0 |
| 3 | | Տարեսկզբի ազատ մնացորդ | 4388,9 | | 4388,9 | | 100,0 |
| 4 | | **Ընդամենը եկամուտներ** | 125135,3 | | 88784,2 | | 71,0 |

Վայոց Ձորի մարզ, Վայքի քաղաքապետարան

## ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

առ. 30.09,2013

| N Խումբը | Ենթախումբը | Ծախսերի անվանումը | Տարեկան բյուջե պլան (հազ.դրամ) | Հաշվետու ժամանակաշրջան 3-րդ եռամսյակ պլան (հազ.դրամ) | Փաստ | Կատար ման % | կատարմ.% տար.պլանի նկ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | Վարչական բյուջե ընդամենը | 129524,3 | 135939,2 | 78539,1 | | 60,6 |
| 1 | | Տեղական ինքնակառավարում | 43263,7 | 44623,2 | 27245,3 | | 63,0 |
| 2 | | Պաշտպանություն | | | | | |
| 3 | | Հասարակական կարգի պահպանություն | | | | | |
| 4 | | Կրթություն և գիտություն | 36300,0 | 39251,4 | 26000,0 | | 71,6 |
| 5 | | Առողջապահություն | | | | | |
| 6 | | Սոցիալական ապահովություն և ապահովագրություն | 1500,0 | 1500,0 | 855,0 | | 57,0 |
| 7 | | Մշակույթ, սպորտ և կրոն | 23115,0 | 24525,2 | 15739,0 | | 68,1 |
| 8 | | Բնակկոմունալ տնտեսություն | 20490,0 | 20812,0 | 8289,5 | | 40,5 |
| | 7,1 | Ճանապարհների վերանորոգում | 4000,0 | 4000,0 | | | |
| | 7,2 | Սան մաքրում | 10634,0 | 10887,2 | 7574,9 | | 71,2 |
| | 7,3 | Կանաչապատում | 856,0 | 924,8 | 714,6 | | 83,5 |
| | 7,4 | Արտաքին լուսավորություն | 5000,0 | 5000 | | | |
| | 7,5 | Հարազատներ չունեցող մարդկանց թաղում | | | | | |
| | 7,6 | Ջրային կառույցների շահագործում | | | | | |
| | 7,7 | Այլ ծրագրեր | | | | | |
| 8 | | Վառելիքաէներգետիկ համակարգ | | | | | |
| 9 | | Գյուղատնտեսություն | 555,6 | 635,4 | 410,3 | | |
| 10 | | Անտառային, ջրային տնտեսություն և ձկնաբուծություն, անասնաբուծ., հակահամաճարակային միջ. | | | | | |
| 11 | | Լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ | | | | | |
| 12 | | Պահուստային ֆոնդ | 4300,0 | 4592,0 | | | |
| 13 | | Այլ ծախսեր | | | | | |
| 14 | | Հիմնական խմբին չդասվող ծախսեր | | | | | |
| 2 | | Ֆոնդային բյուջե | | | | | |
| | 1 | Կապիտալ շինարարություն | | | | | |
| | 2 | Կապիտալ վերանորոգում | | | | | |
| | 3 | Վարկերի և այլ փոխառությունների մարում | | | | | |
| | 4 | Պահուստների ձևավորում | | | | | |
| 3 | | Ընդամենը ծախսեր | 129524,3 | 135939,2 | 78539,1 | | 60,6 |

Վայոց Ձորի մարզ, Վայքի քաղաքապետարան

# ԱՌԱՆՁԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ըստ կիսամյակի)

առ. 30,09,2013թ,

| N | | Անվանումը | Թույլատվություն ների քանակը | Տեղական տուրքի դրույքաչափը |
|---|---|---|---|---|
| խումբ | ենթախումբ | | | |
| 1 | 1 | Նոր կառուցվող օբյեկտներ, այդ թվում՝ | -- | |
| | 1,1 | հիմնական | -- | |
| | 1,2 | մինչև 6 քմ՝ ժամանակավոր | -- | |
| | 1,3 | 6 քմ և ավելի՝ ժամանակավոր | -- | |
| | 2 | Վերակառուցվող, արտաքին տեսքը փոփոխվող օբյեկտներ | -- | |
| | 3 | Քանդվող օբյեկտներ | -- | |
| | 4 | Ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանք վաճառող օբյեկտներ, այդ թվում՝ | 68 | 12.0 |
| | 4,1 | հիմնական շինությունների ներսում | 63 | 12.0 |
| | 4,2 | ոչ հիմնական շինությունների ներսում | 5 | 12.0 |
| | 5 | Բացօթյա վաճառք կազմակերպող օբյեկտներ, այդ թվում՝ | --- | |
| | 5,1 | գազ և վառելիքաքսայուղային նյութեր վաճառող | 6 | 150.0 |
| | 5,2 | գյուղմթերքներ վաճառող | --- | |
| | 5,3 | այլ ապրանքներ (այդ թվում՝ ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտ) վաճառող | | |
| | 6 | ժամը 24.00 ից հետո աշխատող օբյեկտներ, այդ թվում՝ | 0 | |
| | 6,1 | խաղատներ | --- | |
| | 6,2 | շահումներով խաղերի կազմակերպման օբյեկտներ | --- | |
| | 6,3 | բաղնիքներ (սաունաներ) | --- | |
| | 6,4 | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներ | | |
| | 7 | Տեղադրված գովազդներ, այդ թվում՝ | --- | |
| | 7,1 | ծխախոտի արտադրանք գովազդող | --- | |
| | 7,2 | այլ արտաքին գովազդ | --- | |
| 2 | 1 | Վարձակալության տրված հողատարածքներ (հա), այդ թվում՝ | 5.9 | |
| | 1,1 | գյուղատնտեսական | --- | |
| | 1,2 | համայնքային սեփականություն համարվող | 5.9 | |
| | 2 | Վարձակալության տրված համայնքի սեփականություն համարվող ոչ բնակելի տարածքներ (քմ) | --- | |
| | 3 | Բնակչության թիվը | 6840 | |
| | 4 | Նախադպրոցական հիմնարկներում երեխաների թիվը | 180 | |
| | 4,1 | Ծնողական վճարի չափը ( դրամ ) | 3500 | |
| | 5 | Երաժշտական դպրոցների թիվը | 1 | |
| | 6 | Մարզադպրոցների թիվը | 2 | |
| | 7 | Մշակույթի տների և ակումբների թիվը | 2 | |
| | 8 | Գրադարանների թիվը | 1 | |

Վայքի քաղաքապետ՝ Հ. Սարգսյան

Գլխ. Հաշվապահ՝ Ս. Ավետյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 45

09 հոկտեմբերի 2013

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՀՈՒՄՅԱՆ 6/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂ. ՍԼԱՎԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝ ք. Վայք, Շահումյան 6/2 հասցեում գտնվող քաղ. Սլավիկ Մաթևոսյանի կողմից ինքնակամ կառուցված համայնքի սեփականություն հանդիսացող 24.4 քմ մակերեսով առևտրի սրահը օտարելու վերաբերյալ քաղաքապետի առաջարկությանը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ
4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ
5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ
6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ
7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
### ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 46

---

09 նոյեմբերի 2013

**ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

---

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 07.02.2013թ. թիվ 130-Ն որոշումը `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխություններին.

1. Համայնքի բյուջեի եկամուտներ հատվածի 1257 տողից/պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ/սուբվենցիաներ/ 4 300 000 հազ. /չորս միլիոն երեք հարյուր հազար/ դրամ տեղափոխել 1255 տող/համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ/:
2. Համայնքի բյուջեի եկամուտներ հատվածի 1334 տողում/այլ գույքի վարձակալությունից մուտքեր/ ավելացնել 550 000/հինգ հարյուր հիսուն հազար/ դրամ:
3. Համայնքի բյուջեի եկամուտներ հատվածի 1147 տողում/ Համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար/ ավելացնել 50 000/հիսուն հազար/ դրամ:
4. Վայքի քաղաքապետարանի /ՀՀ պահուստային ֆոնդ/ գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2, ծրագիր 51, 4891տնտ. դասակարգման հոդվածից 1 300 000/մեկ միլիոն երեք հարյուր հազար/ դրամ տեղափոխել <<Վայքի քաղաքային համայնքի Մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի գործառնական դասակարգման բաժին 8, խումբ 2, դաս 3, ծրագիր 51, 4637/ընթացիկ դրամաշնորհ/ տնտ. դասակարգմանը:
5. Վայքի քաղաքապետարանի /ՀՀ պահուստային ֆոնդ/ գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 ծրագիր 51, 4891տնտ. դասակարգման հոդվածում ավելացնել 600 000/ վեց հարյուր հազար/դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՎԱՀԵ
2. ԱՐԱՄՅԱՆ ԱՐԱՄ
3. ԲԱԲԱՅԱՆ ՀՐԱՅՐ

4. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ

5. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՀԵ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

7. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

8. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

9. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ